

Ուղղագրության մերօրեայ հոգերու մասին

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ
pakrates@yahoo.com

«Նոր Հերոսապարտում» անուն պար-
ժողովակցում էինք այդ գիրքի խմբագիր
և սրբագրիչ Լուսինե Անտիստանի հետ:
(Գիրքի ծանոթագրությունը լոյս տեսած էր
«Այս»-ի նախորդ թիվին, հայերեն էջերու
վրայ): Մեր թղթակցություններու ընթացքին
փարակարծության նիսի դարձաւ «Օ» տառի
փոխարէն գրաբարեան «ա»-ի գործածու-
թիւնը: Առաջին պահէն իսկ յայտնի էր թէ
շահեկան և ուսուցանող, նոր խորհուրդնե-
րու գերին պարտաւարող յարկություն մը
պիտի ունենայ այս մասին կարծիքի փո-
խանակումները:

Ինք ու իր փարած աշխատութիւնը բնու-
թագրած էր հետեւեալ փողերով: «Ազգա-
յին համափարած ողբերգությունների են-
թապարկերին ուրիշ ոչինչի մասին մտածել
չի կրնում:

Բայց հայագիտական փորձիկ մի կեղ-
րուն հիմնելով Վաղարշապատում՝ պա-
րեզազմին նախորդած երեք ամիսներին
արեւմտահայերէնի խմբի ուսանողներին
սովորեցրի մաշտոցեան ուղղագրութիւ-
նը, արեւմտահայերէնի քերականութիւնը,
սկեցիցին խաւսել: Իսկ երբ սկսուեց պա-
րեզազմը, իրենց ոգեւորած դրուագներից
պարմունաճըներ սկսեցին գրել: Ընթացի,
խմբագրեցի, փորձիկ գիրք կազմեցի: Հա-
ւանաբար եկող շաբաթոյ մը տարանսից
կը վերցնեն: Փորձիկ մի շնորհանդէս կը
կազմակերպենք՝ հերոսների, նրանց ծնող-
ների, լեզուաբանների, գրականագէտնե-
րի մասնակցութեամբ: Սիրով ձեզ էլ կը
նուիրելի գիրքը ու կը հրատարակել, եթէ հայ-
րենիքում լինէիք: Բայց կարող եմ ուղարկել
գիրքն երկրորդային ձեռագրով՝ ծանա-
թանալու, եթէ կամենաք: Եւ գուցէ ցան-
կանաք ինչ-որ կերպ լուսաբանել գիրքը:

«Երաբարքություն բառապնդու համար
հարցուցի: «Սակայն չեմ հասկցած թէ ին-
չո՞ւ «Օ» տառի փոխարէն գործածուած է
գրաբարեան «ա»-ը: Արդարեւ «խօսել»
բայը վերածուած է «խաւսել», կամ ծա-
նօթանալու»-ի փոխարէն «ծանաթանալ»:
Նոյն երեւոյթը նկատեցի կարդալով յա-
ռաջարկը:

Նշեմ որ արդի արեւմտահայերէնի մէջ
չունինք «ա»-ի գործածութիւնը: «Օր» բառի
փոխարէն «աւոր» կը գոյարեւել միայն
գրաբարի մէջ, որ թողած ենք ԺԹ դա-
րէն այս կողմ:

Որոշեցինք ընթերցողի հետ կիսել նիսի
շուրջ մեր փարակարծութիւնները: Նկատի
ունենալով Լուսինե Անտիստանի գրաբարա-
գէտ կրօնումը, մենք կը գոհանանք միայն մեր
միտքը յուզող երեւոյթները ներկայացնելով,
անկի բովանդակայից բացառութիւնները
թողելով մեր սիրելի գրուցակցին:

Որպէսզի հարուածներու յաջորդականու-
թիւնը յարակեցնենք, շարունակենք այսպէս:
Ըսաւ Լուսինե՝

«Ես առաջիմ լիովին ընդունում եմ օ-ի
գրութիւնը միայն այնպէս, որպէս ճիշդ
է Օ գրել, ինչպէս՝ օր, Օգոստոս, բայց
ոչ «ովիմպիադա», «ովկիանոս», «Որ-
տաւա», «Ուլո», «որգան», «ոպերա» եւ
այլ բառերում, որովհետեւ այդ բառերում
չկայ Օ=ԱԻ ստուգաբանութիւն, ինչպի-



սին կայ Օգոստոս=Ագոստոս դէպքում:
Կամ այսպէս «Մարո», «Կարո» եւ նման
անունները դասական ուղղագրութեամբ
գրում են օ-ով, սակայն դա չունի որե-
ւէ հիմնաւորում, որովհետեւ եթէ գրում
ենք Կարո, դա պիտի յեղափարկուի սրու-
գաբանութեամբ լինել Կարաւ, որպէս
պիտի հնչէր av, եւ որպէսզի օ հնչէր,
պիտի վերջոյն որեւէ բաղաձայն ունե-
նար՝ Կարաւ=Կարօր:

Չեմ յորդորում, որ ուրիշները գործածեն,
սակայն ինքս փարիներ ի վեր այսպէս եմ
գրում, եւ կարծեմ առարկող միակ փա-
տարկը աւանդոյթն է:

Քանի որ ես սրեղծագործում եւ գի-
տական աշխատութիւններ եմ գրում գրա-
բար, արեւելահայերէն եւ արեւմտահայերէն,
ճիշդ եմ համարում գործածել մէկ ուղղագ-
րութիւն: Սփիւռքն էլ միաբան չէ դասական
ուղղագրութեան հարցում, փարբեր արա-
թերթեր ունեն ուղղագրական փարբերակ-
ներ, որոնցից ամենակարգաւոր, արիւնակ,
կրատարական ամանցն է, որն ունի գրութեան
երեք ձեւ՝ ւ, վ, ու (յուզած, յուզած, հուզ-
ած, յուզած): «Յատուած» բառը այսպէս
գրում են «յոդուած», սփիւռքում գրում են
«յոդուած», «յոդած», Մաշտոցը կը գրէր
«յատուած»: Իսկ աւարտ անունների փա-
ռադարձման հարցը կարեւոր խնդիրներից
մէկն է: Աւանդոյթի ոյժը մեծ է, դիտին չէ
վերադարձը: Թերեւս համաձայն չլինէր իմ
այս քայլին, սակայն ես ձգտում եմ հա-
րատորին հաւաքարիմ մտալ Մաշտոցին
ու նրա աշակերտներին, որոնք սրեղծե-
ցին մեր ուղղագրութիւնը:

Սփիւռքն ու հայրենիքը ուղղագրութեան
հարցում երկար փերիներ անգիշում են եղել,
եւ սփիւռքն իսկապէս զիջելու ոչինչ ունի:
Իսկ իմ համոզմամբ, երկուստեք մաշտո-
ցեան հիմքն ընդունելը, ճշմարիտ լինելուց
բացի, թերեւ նաեւ հոգեբանաբար ան-
լի դիտին լինի»:

Ի պարսպան ըսաւ Բագրատ
«...Կարդացած եմ «Օ» եւ «ա»-ի մա-
սին քու բացատրութիւնները: Յայտնի է որ
այդ մասին իրարմէ բաւական փարբեր հա-
մոզումներ ունինք: Կարծէ այդ մասին մի
քիչ կարծիքի փոխանակում ունենալ, կամ
գոնէ ես պարզեմ իմ մերձեցումը:

Նախապէս փարբեր առիթներով մեր-
ժած եմ դասական ուղղագրութեան «Մե-
րուպեան» անունումը: Պարսիքը յիշել թէ
այսօր այլեւ անգործածելի դարձած, կեան-
քի ներկայ հրամայականներու դիմաց բո-
լորովին անբարար մնացած գրաբարը, Ե
դարուն մեր թարգմանչած վարդապետնե-
րու առօրեայ խօսակցական լեզուն էր, կամ
այլ այլ բացատրութեամբ բունեալ ժամանա-
կի մշոյ բառբարը: Յիշենք որ թարգմանիչ
վարդապետները առհասարակ մշեցիներ
էին, ներառեալ Մեսրոպ Մաշտոցը:

Գիրենք թէ խօսակցական լեզուն ունի
խրայարով կենդանութիւն, որու հետեւանքով
յարարեւորէն կը վերարարարողի ժողովրդի
բերանին մէջ: Այդ վերարարարութեան
հետեւանքներն են հայերէնի բազմաթիւ
բառբարները, որոնք հագիւ վերջին հա-
րիւր փարտայ ընթացքին մեծաւ մասամբ
անհետացան շնորհիւ 1918-էն սկսող պե-
րականութեան եւ անոր նախորդող դպրո-
ցաշինութեան եւ հրապարակչութեան ու
յաջողող ռաբիտի եւ հեռաւարացոյցի հա-
ղորդումներուն:

Խօսակցական լեզուի այդ ազար յե-
ղաշրջումին դիմաց գիրն ու գրականու-
թիւնը, քերականութիւնը եւ ուղղագրութի-
ւնը ունի իր կանոնները, որոնց միջամտելու
անհրաժեշտութիւններ պ երբ ծագին, շար-
քնական է որ լեզուաբաններ, հայագէտ-
ներ լուծումներ առաջարկեն եւ ինչո՞ւ չէ,
գործարարն նաեւ»:

Էլի ըսաւ Լուսինե՝
«Անշուր գիրում, որ փարբեր են մեր
մապրեցումները ուղղագրութեան եւ գրաբարի

հարցերի շուրջ, եւ կարծիքների փոխանա-
կումը շահաւէր կը լինի ամէն պարագայում:
Առաջարկում եմ լեզուի եւ ուղղագրութեան
նիսիների մասին գրուցել առանձնապէս:

Իսկ ուղղագրութեան փորձում մա-
նաւանդ հետաքրքրական գրոյց կը լինի,
եթէ առանձին ուղղագրական իրողութիւննե-
րը ներկայացնենք մեր մապրեցումներով ու
բացատրութիւններով:

Ուղղագրական իրաբանչիւր «բարեփո-
խում», հասկանալի է, նպատակայարմա-
րութիւնից է բխել, այսինքն՝ «բարեփոխում»
է եղել, որովհետեւ նպատակայարմար է
այդպէս եւ ոչ թէ որովհետեւ այդ փոփոխու-
թիւնը անհրաժեշտ է: Մինչդեռ ուղղագ-
րութիւն ըստ մաշտոցեան նախարիւնակի
կանոնարկելու գաղափարը նախ եւ առաջ
անհրաժեշտութիւնից է ծագում:

Պարտադիր չէ, որ բոլորն ընդունեն այդ
գաղափարը, բայց ինձ համար, որ գիրական
ու գեղարուեստական գործեր է սրեղծում
գրաբար, արեւելահայերէն եւ արեւմտա-
հայերէն զուգահեռաբար, սկզբունքային
հարց է, որ ամենուրեք գործածեմ մի եւ
նոյն ուղղագրութիւնը, երեւի այս կէտում
ինձ հետ համաձայն կը լինէք:

Ուրիշ մի սկզբունք եւս պիտի գոր-
ծի: Եթէ փոփոխութիւն, համարում կամ
փոխարիւնում պիտի լինի, որեւն հարկ է
մինչեւ վերջ լինել սկզբունքային, մաքրեմա-
րիկական բանաձեւերի համաբանութեամբ:
Սակայն ակնյայտ է, որ մեր համակար-
գում փոփոխութիւնները պարահական ու
խարական երեւոյթ ունեն, եւ չեն փարածո
ում՝ նման ուրիշ երեւոյթների վրայ:

Հնց այս առթիւ, շարունակելով «ա»
եւ «օ» գրութիւնների մասին մեր գրոյցը,
կարեւոր եմ համարում նախ՝ ընդգծել, որ
օ-ն աւարար նշան է, եւ փրամաբանական
ու հաւանական է թուում, որ ԺԱ դարից
այս կողմ այբուբեն է ներմուծուել զուր ճե-
պագրութեան համար՝ հիմնականում մա-

րենագիր վկայութիւններում, քանի որ նրա
շնորհիւ գրչի քառակի շարժումը փոխարի-
նուել է գրչածայրի մէկ պրոյտով, մինչդեռ
վիճագիր արձանագրութիւններում գրեթէ
սրբարէն պահպանուել է երկբարբառը:
Հասկանալի եւ ծանրակշիռ հանգամանք
է նպատակայարմարութիւնը, սակայն յար-
մարեցնելու նպատակով անգամ չի հիմնա-
ւորում նոր այդ նշանի մուտքը այբուբեն:
Քանի որ նոյն փրամաբանութեամբ՝ կա-
րեւի էր «իւ» երկբարբառի համար այբուբեն
մուտքագրել «Ս» տառը, որի կարճապետ
գործածութիւնն արդէն անիմաստ ու լիովին
անելորդ կը դարձնէր «իւ»-ի գոյութիւնը, եւ
անկի դիտին ու նպատակայարմար կը լի-
նէր գրել «ձմն», քան «ձին», «Սրաբանչիւր»,
քան «իւրաբանչիւր», «մրեանց»՝ «իւրեանց»,
ինչպէս որ այսպար անկի յարմար է գրել
«քոն», քան «քան», «ձանօթ», քան «ձա-
նաթ», «մօր», քան «մար»:

Վարսահարար, նոյնպէս ճեպագրութեան
համար է այբուբեն մտել «եւ»-ը փոխարի-
նող կցագիր «և»-ը: Հարարորինս սեղմելու
եւ զեղչելու նոյն նպատակն է ժամանակի
ընթացքում գրատութեան մէջ բաղաձայ-
նից յետոյ «ու»-ն վերածել «ւ»-ի՝ հար-
ած, յողած: Ի վերջոյ, բոլոր երկբար-
բառներն էլ դարերի հոլովոյթում փոխել
են հնչիւնական իրենց կերպարանքը: Եւ
«խարական», բայց անմտ թուացող վե-
րաբերմունքը նրանցից մէկի հանդէպ, եթէ
չի կազմաբանում, սպա գոնէ խարխլում
է հայերէնի ուղղագրութեան հանձնարող
մրադարացումը: Կարեւոր մի սկզբունք պիտի
գործի ուղղագրութեան համար, նա չպի-
տի հետեւի անընդհատ փոփոխուող հնչա-
բանութեանը:

ԺԹ դարավերջին, Ղազարոս Աղա-
յանի ջանքերով, մամուլում («Մշակ», «Հո-
րիզոն») փարածուեց «ւ»-ագրութիւնը, որն
ուղղագրական զանցառութեան նախադէպ
էր ու պիտի համարձակարէն ճանապարհի
հարթեր դէպի «վ»-ագրութեամբ եւ ուղղագ-
րական այլ խորհրդանշանով ուղեկցուելիք
յայտնի գաղափարային «բարեփոխումները»:

Պէտք է ճիշդ հասկանալ, թէ արդիւնքում
ինչ է փոփոխութիւնը: Երբ ԺԱ դարից յետոյ
այբուբենում յայտնուած «օ» տառը եկաւ
փոխարինելու փակ վանկի «ա» երկբար-
բառը՝ ագոստոս=օգոստոս, աւած=օձ, դրա-
նով սկզբնապէս չխարխլուեց ուղղագրա-
կան գործող կտու համակարգը, սակայն
յերազայում բառասկզբում լսուող «օ»-ն
գրառելով «օ»-ով՝ լեզուում փառարարէն նե-
րմուծեցին կեղծ «ա»-ով բազմաթիւ բա-
ռեր՝ օպերա, օզոն, օլիմպիադա, օպերիկա,
օպա, օրգանիզմ, օքսիդ, օվալ: Այսպիսի
բառերը Մաշտոցն ու նրա աշակերտները
փրատարածում էին Ռ-ով՝ Ռոլիմպոս, ով-
կիանոս, Ռոքիտա, Ռրագինէս, Ռվիդիոս:

Դեռ չեմ խաւսում Օ-ով վերջացող բառերի
ու անունների մասին՝ Մարո, Կարո, Օսլո,
Օհայօ, որոնց մէջ ոչ մի Օ ճիշդ չէ: Որեւն,
յերազայ այդ զարարողութիւնները սրբագ-
րելուց յետոյ միայն «օ»-ի մուտքը ուղղագ-
րական համակարգ թերեւ վերապահա-
րէն եւ ժամանակաորապէս ընդունելի լինի:

Մինչդեռ «ու»-ն «ւ»-ով փոխարինելու
քայլը սկզբից ենթ թուացրեց համակարգը,
եւ կազմալուծեց «վ» հնչիւնի ձայնագրու-
թեան այնքան ճշգրտարարն գրուած փրա-
մաբանութիւնը:

